Ոտքերը երկարօրէն քսում է լաթին: Կանգ է առնում ու նորից քսում է: Զլխի թէ փողոցի ցեխը կամ փոշին յատակի մաքրութիւնը վիրաւորի: Այդ կէտը վերին աստիճանի կարեւոր է. դրա մէջն է երկրի երժշտական զարգացման ամբողջ խորհուրդը: Այո՛, այո՛: Թշնամիները ծիծաղում են. չեն հասկանում... Ի՞նչ բթամտութիւն:

Մտնում է առաջին դահլիճը: Ամէն ինչ տեղն է: Պատուհանների վրայ կանանչ ճառագայթներ են թառել: Յատակը պսպղում է: Պոչաւոր դաշնամուրը, սեւ երենոսկ դագաղի նման, լեցրել է սենեակի անկիւնը, ու Մոցարտը սուղել է իր կապոյտ աչքերը խաւար հայելիի մէջ:

Վարիչը նայում է: Ահա, երեք տարուան այս չինարար գործն է, որ պիտի դատեն: Ի՞նչ անբարեխղճութիւն: Թո՛ղ Երեւանում գտնեն ուրիշ մի դահլիճ այսքան մաքուր: Թո՛ղ... Տարօրինակ բան. Մոցարտի աչքերի անբնական այս մեծութիւնը, բիբերի կայծը եւ այդ անկիւնաւոր շուքերը պատերի վրայ... Վարիչի վարի շուրթը դողում է... «Զղե՛րս»,— մտածում է ու մտնում յաջորդ սենեակը: Պարապ: Աթոռը վերցնում է, որ նստի ու, յանկարծ գոյնը նետում է եւ ականջ դնում:

Մօտակայ սենեակից՝ նրա ննջարանն էր՝ նախ խուլ մի խոպոց ու ապա իւղոտ հաղի ցած մի ձայն է լսւում: Գալարուած մատերի տակ աթոռը դողդղում է: Ուզում է երկու քայլ անել՝ ոտքերը գետինն են գամւում: Բեթհովէնի կաւէ դիմակը մեռելի գոյն է առնում ու կարծես աչքերը կամաց բացում է: Շունչը կըտրած, աչքերը յառում է դրան վրայ եւ սպասում: Ոչինչ չի լսւում: Աթոռը ձեռքից ազմուկով վայր է ընկնում, աչքերը մթնում են, ծունկերը ծալւում եւ անդլիական կօշիկները երկաթէ գնդերի նման ոտքերից կախ գալիս:

«Տէ՛ր Աստուած»... Յաղթանդամ այս մարդը ահագին ճիգ է անում, վճռական որոշում տալիս, առաջանում, ձեռքը դնում դրան վրայ: Ուզում է բաց անել, չի կարողանում: Նոր ճիգ: Դուռը սառած ձեռքից բռնում է, ժանգոտած երկաթի ձայն հանում ու շարժում: Ամբողջ մարմինը սարսռում է, թեքւում ու իր ծանրութիւնը, մեռած մի բանի նման, գըցում դրան վրայ: Բացուեց: Զարմանալի բան՝ ոչինչ չկայ: Դաշնամուր, աթոռ, սեղան: Կանոնաւոր, երկրաչափական եւ իմաստակ այն ճշտութիւնը, որ վարիչի միջակ մտայնութիւնը սիրում էր: Նայում է, ծիծաղում: Բայց, կամաց կամաց, դէմքի մորթի տակ, ծիծաղի շարժուն գնդերը լարւում են, կարծրանում, սառչում: Յետ է քաշւում: Աչքերը դէմից դուրս են գալիս, եւ մազերի տակ կաթիլ կաթիլ քրտինք է դոյանում: Յատակի փայլուն հայելիի մէջ կուչ եկած իր ստուերը բախւում է մի ուրիշ ստուերի ու կրակին կպած թեւի պէս թպրտում:

Երկայն դեղին մօրուք, կապոյտ աչքեր, սպրդնած դէմք, սլաւոնական նկարչական դըպրոցի մի տեսակ Յիսուս: Սակայն, փոսֆորով լեցուն բիբեր, արիւնի բարակ երակներով պատուած: Սուր, մարմնի մէջ մխրճուող նայուածք: Անշարժ, խիտ անտառի ճիւղերի միջից երեւցող վագրի նայուածքի նման ուղղահայեաց կանանչ դծերով:

Վարիչը զգում է, որ իր մարմինը անհետանում է: Փետուրի նման մի բան: Եւ ինչպէս պատահում է կեանքի վերջին վայրկեանին, մահի անողոք սպառնալիքի ժամանակ, նրա երեւակայութեան առջեւ, Ղզլարը, Մոսկուան, Թիֆլիսը, եկեղեցական երգեցիկ խմբերը, Զայկովսկին, եւ «Երեւան բաղ եմ արել»ը կոնտրապունկտ են պարում: Նօտատետրերից բոլոր ձայնանշանները աղմուկով վայր են ընկնում, բեմօլները դիեզների հետ ցատկռտում են, մինչ բանալիները ոլորուող օձերի նման կուրծքի վրայ սողում են: Պոչաւոր մի ձայնանիշ, մանդաղի նման հնձում է իր ուղեղը ու ու մերթ ընդ մերթ մէկը սղոցում է մեծ մի ծառ: Ուրիշներ եւս, սղոցում են, սղոցում են: Անտառի հսկայ ծառերը վայր են ընկնում, ճիւղերը փշրւում են: Քամիները տերեւների մէջ խաղում են, խարշափում, շաչում:

Ստուերը մեծանում է, աչքերը վառուած ջահերի նման ման են գալիս սենեակի մէջ, կպչում պատերին, արտացոլւում դաշնամուրի վրայ, վեր ցատկում, վայր ընկնում ու վարագոյրների հետ տատանւում, ծալք ծալք երերում... Ձեռքեր...հինգ հատ, տասը հատ, քսան հատ... սեղմուած մատերով, ատրճա-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան